

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Առաջադրանքների լուծման համար տրվում է **75** րոպե **3-4**-րդ դասարաններ

- Յուրաքանչյուր առաջադրանքի համար տրված պատասխաններից ճիշտ է միայն մեկը:
- Չլուծված առաջադրանքի համար միավորներ չեն գումարվում և չեն հանվում:
- Մրցույթի մասնակիցը կարող է վաստակել առավելագույնը 110 միավոր:
- Մրցույթի ավարտին առաջադրանքների թերթիկը մնում է մասնակցի մոտ:
- Մրցույթի մասնակիցներին ներկայացվող գլխավոր պահանջը առաջադրանքներն ինքնուրույն և ազնվորեն կատարելն է:

3 միավոր գնահատվող առաջադրանքներ

1. Ո՞ր տառը բռնի աջ բառի ձեռքը, որ երկուսով դառնան անվախ:
- Ա. գ    Բ. ք    Գ. ս    Դ. ք    Ե. դ
2. **Ճուտիկ, լճակ, ձիուկ, կոշիկ, գծիկ** բառերից չորսը նույն «ընտանիքից» են: Ո՞ր բառն է «խորթ»:

Ա. ճուտիկ    Բ. լճակ    Գ. ձիուկ    Դ. կոշիկ    Ե. գծիկ

3. Ի՞նչ բառ է գաղտնագրվել նկարելուկով:



Ա. կոկոն    Բ. գլխարկներ    Գ. կոներ    Դ. կարկին    Ե. կոլուլակ

4. Ո՞ր տառը աջից կամ ձախից «կտսնձվի» **առ, վագ, ծառ, ներկ, շուն** բառաշարքի բոլոր բառերին և նոր կյանք կտա դրանց:


Ա. պ    Բ. ի    Գ. ու    Դ. չ    Ե. ա

5. **Պայտ, սայլ, բարձ, տորթ, վտառ** բառերից չորսը ենթարկվում են նույն օրինաչափությանը: Ո՞ր բառը չի ենթարկվում այդ օրինաչափությանը:

Ա. պայտ    Բ. սայլ    Գ. բարձ    Դ. տորթ    Ե. վտառ

6. Ո՞ր բառը չի կազմվում ըստ բերված գծապատկերի:

Ա. ավազակ    Բ. ավազան    Գ. ագարակ  
Դ. գավազան    Ե. ավերակ




7. Արայի մայրն ունի երեք որդի: Ավագ որդու անունն Ավագ է, կրտսեր որդունը՝ Կորյուն: Ի՞նչ է միջնեկ որդու անունը:

Ա. Անդրանիկ    Բ. Ավետիս    Գ. Արամայիս  
Դ. Արա    Ե. Արամ

8. Մեղվիկը թաքցրել է մի բառ, որը միավորում է ծաղկի բոլոր թերթիկները: Ի՞նչ բառ է թաքցրել մեղվիկը:

Ա. տնտես    Բ. տնակ    Գ. գիտուն  
Դ. անտուն    Ե. տուն



9. Առանց այդ տառի՝ կերակուր է, այդ տառով՝ ափսեն, դանակը, պատառաքաղը, գդալը և բաժակը՝ միասին վերցված: Ո՞րն է այդ տառը:

Ա. ք    Բ. կ    Գ. ե    Դ. ա    Ե. շ

10. Նկարելուկներից չորսը կազմվել են նույն օրինաչափությամբ: Ո՞րը չի ենթարկվում այդ օրինաչափությանը:

Ա. = 2ւ+ո    Բ. = 2թ+ա    Գ. = 2կ+ու  
Դ. = 2շ+ի    Ե. = 2գ+ե

4 միավոր գնահատվող առաջադրանքներ

11. Անգետիկը կազմել էր Հ. Թումանյանի հեքիաթների հետևյալ ցանկը. «Պոչատ աքլորը», «Կացին թագավորը», «Անխելք մարդը», «Սուտլիկ ձուկը», «Անբան Նազարը», «Ոսկու կարասը», «Չախչախ որսկանը», «Խոտող աղվեսը», «Անհաղթ ախպերը», «Կիկոսի մահը», «Քաջ Հուռին»: Վերնագրերից քանիսն ուղղեց Գիտունիկը:

Ա. վեց    Բ. յոթ    Գ. ութ    Դ. ինը    Ե. տասը

12. Տարբերակներից որո՞ւմ **վայր** ցույց տվող բառ չկա:

Ա. նահանջում    Բ. բացատրական    Գ. ծառատունկ    Դ. մարտիկ    Ե. սմբակ

13. Ի՞նչ բառ է թաքցրել մեղվիկը:

բարձ - արձան  
վարկած - կաճան  
ծիածան -

Ա. աճական    Բ. ծավալ    Գ. ծիծեռնակ    Դ. անապատ    Ե. ծանրոց

14. Ի՞նչ է գաղտնագրվել նկարելուկով:

Ա. միրգ    Բ. համերգ    Գ. հրահանգ , ՄՄԳ  
Դ. սիրամարգ    Ե. նահանգ

15. Ո՞ր բառն է կազմվում **աշուն** և **դրամ** բառերի բոլոր տառերով:

Ա. շերամորդ    Բ. նշմարել    Գ. անուշադիր    Դ. դաշնամուր    Ե. նշադրում

16. Աջ կողմում բերված է տառաթվային ծածկագիր, որում յուրաքանչյուր **ՀՈՒՐ** տառին համապատասխանում է մեկ թվանշան: Նույն տառերին համապատասխանում են նույն թվանշանները: Բերված տարբերակներից ո՞րն է համապատասխանում այդ տառաթվային ծածկագրին:

Ա. 872	Բ. 972	Գ. 575	Դ. 648	Ե. 496
+	+	+	+	+
<u>672</u>	<u>672</u>	<u>672</u>	<u>743</u>	<u>569</u>
1544	1644	1247	1391	1065


17. Երկու ախպեր իրար հետևից վազում են, Իրար չեն հասնում երբեք: (ժողովրդական հանելուկ)

Ա. աչքեր    Բ. գիշեր-ցերեկ    Գ. մարդու ոտքեր  
Դ. երկու նապաստակ    Ե. շուրթեր

18. **Մյուն, երեկո, բույն, արեղա, քաղաք** բառաշարքում որոշակի սկզբունքով թաքնվել է մի բառ, որը

Ա. ն՝ երաժշտական գործիք է, և՛ գրենական պիտույք  
Բ. ն՝ մրգի տեսակ է, և՛ մարմնի մաս  
Գ. ն՝ ջերմության աղբյուր է, և՛ երկնային մարմին  
Դ. ն՝ գրական ստեղծագործություն է, և՛ ծառի տեսակ  
Ե. ն՝ մարմնի մաս է, և՛ բույսի տեսակ

19. Ի՞նչ բառ է թաքցրել մեղվիկը:

**օդ, օղակ, օրինակ, օղապարսն, օրինակելի,**   
Ա. օրենադրական    Բ. օրինական    Գ. օդանավակայան  
Դ. օրենադիր    Ե. օրհներգ

20. Սոնան որոշակի օրինաչափությամբ կազմեց **անոթ, բահ, գայլ, դեղ, ելակ** բառաշարքը: Լիլիթը բառաշարքում գտավ մեկ այլ օրինաչափություն և շարունակեց բառաշարքը՝ պահպանելով երկու օրինաչափությունները: Տարբերակներից ո՞րը գրեց Լիլիթը:

Ա. զանգակ    Բ. թթվել    Գ. թանաք    Դ. ընկույզ    Ե. զկեռ

**5 միավոր գնահատվող առաջադրանքներ**

21. **Հ-ով արմատ է պահում,**  
**Լ-ով ջրում է սահում,**  
**Ձ-ով երկար է, բարակ,**  
**Շ-ով լույս է շատ արագ:** (հանելուկ)

Ա. որ    Բ. ար    Գ. ամ    Դ. ող    Ե. ակ

22. Ո՞ր նախադասությունն է խախտել տարբերակների օրինաչափությունը:

Ա. Իշխանը իջավ ինքնաթիռից:  
Բ. Լուսինեն լվաց լոբին:  
Գ. Խորենը խաղաց խոտերում:  
Դ. Ծովակը ծալեց ծրարը:  
Ե. Հայարփին հիացրեց հայրիկին:

23. **Անխնա, արդար, որկոր, մագնա, անբան** բառերից չորսը ենթարկվում են նույն օրինաչափությանը: Ո՞րը չի ենթարկվում այդ օրինաչափությանը:

Ա. անխնա    Բ. մագնա    Գ. արդար    Դ. որկոր    Ե. անբան

24. Ի՞նչ կամ ո՞վ է հնարամտորեն թաքնվել ողջ ծաղկաշղթայի մեջ:

**գնարքուկ, հասմիկ, վարդ, նունուֆար, հակինթ**

Ա. թռչուն    Բ. միրգ    Գ. տարվա եղանակ    Դ. թիվ    Ե. օրվա պահ

25. Ո՞ր երկու բառերն են հետաքրքիր օրինաչափությամբ «թաքնվել» **մեխակ, աշորա, կտոր, ապագա, նվագ** բառաշարքի բառերում:

Ա. մանուկ և շարան    Բ. վագոն և տախտակ    Գ. մական և կարագ  
Դ. պարագա և կախան    Ե. կապար և գավակ

26. Տարբերակներից չորսում երկուական տառ նույն սկզբունքով և՛ պոչ է, և՛ գլուխ: Ո՞ր տարբերակն է զուրկ այս հատկությունից:


Ա. զանգահնչյուն    Բ. ժամատեղ    Գ. դասավարտ  
Դ. գրչակոթ    Ե. արծաթագործ

27. Ի՞նչ նախադասություն է ծածկագրվել: Հայտնի է, որ ծածկագրի մեջ օգտագործվել են հայոց այբուբենի առաջին հինգ բաղաձայններն ու առաջին հինգ ձայնավորները, որոնք ածարարական հնարքով են դասավորվել:

**ԷԳԸԹ ԵՐԵՐԻԹ ԱԲԷՁ ԷԲ Դ**

Ա. Նրանց սիրելի խաղը սա է:  
Բ. Դեզի գագաթի բաղը դա է:  
Գ. Մանր կակաչի գինը դա է:  
Դ. Միշտ լավկան կինը նա է:  
Ե. Դեպի Արարատ ուղին սա է:

28. Ի՞նչ թիվ է թաքցրել մեղվիկը:

կաթ - 3	խոզ - 3	օդ - 2	գիրք - 4
կաթսա - 2	խոզապահ - 3	օդանավ - 3	գրապահարան - 

Ա. 2    Բ. 3    Գ. 4    Դ. 5    Ե. 6